

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ՆՆԻԹԵՐ ՀԱՅ-ՌԻՆԻՏՈՐԱԿԱՆ  
ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.

Հայ ունիտորների գրական վաստակը մեծ չէ ընդհանրապէս: Եթէ մի կողմ թողնենք նրանց անպէտք թարգմանութիւնների երկար շարքը, բաւական է յիշել երկբայելի ինքնուրոյնութեան հետքեր կրող մի քանի կրօնական-դաւանաբանական գրութիւններ և դժուարամարս լատինաբանութեան մէջ խրուած մի երկու քերական փորձեր, մենք սպառած կը լինենք գրեթէ այն ամբողջ գրական ժառանգութիւնը, որ մնացել է մեզ այդ հայրերից: Արուեստի և բովանդակութեան տեսակէտից խեղճ բաներ են յատկապէս նաև այն մի երկու գրութիւնները, որոնք մնացել են մեզ, որպէս նմուշներ հայ ունիտորական-պատմագրութեան, այսպէս օրինակ, հներից Ներսէս Պալիանցի, իսկ նորերից Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրութիւնները, եթէ կարելի է առհասարակ այս երկու հայրերին. ևս հայ ունիտորների շարքը դասել:

Եւ սակայն ԺԴ-ԺԸ դարերի մեր ինքնուրոյն պատմական գրականութիւնը այնքան կարիք ունի նոր լրացումների, որ պէտք է միայն ցաւել, որ մինչ այժմ դեռ տպագրութեան չեն յանձնուած պատմական այդ և նման նիւթերը: Անցեալի այդ մնացորդները կարևոր են և մի այլ տեսակէտից. հայ ունիտորական գրականութիւնը, չը պէտք է մոռանալ այդ, մի մասն է կազմում հայ և օտար գրողներից հեղինակած այն եւրոպական աղբիւրների, որոնք առնչութիւն ունին հայ ունիտորական շարժման հետ: Եւ որովհետև հէնց եւրոպական այդ գրականութեան մէջ է, որ գունեղ արտայայտութիւն են գտնում հայոց պատմական կեանքի այլ և այլ կողմերը, անհրաժեշտ է լրացնել

ըստ կարելոյն նաև այդ գրականութեան բացերը, տպագրութեան տպով հայ ունիտորական պատմագրութեան գեուևս անյայտ քննարկները:

Ներկայիւս ես բաւականանում եմ միայն տպագրութեան յանձնել իմ սեփականութիւն կազմող մի ձեռագրից ժէ գարու երկու ծանօթ ունիտորների՝ Հ. Յակոբ Յիսուսիի և Հ. Մատթէոս Յովանիսեցու թողած պատմական արժէք ունեցող երկու անձանօթ գրութիւնները: Յիշածս ձեռագիրը բովանդակում է՝

ա. Ներսէս Պալիանցի թարգմանած Ֆրատեր Մարտինոսի ժամանակագրութիւնը, (pp. 1r—53v, 59r—275r.)

բ. Թարգմանչի կազմած հայ թագաւորների և կաթողիկոսների գաւազանագիրքը (pp. 275v—316v.):

գ. Մատթէոս Յովանիսեցու յիշատակարանը պարսկական դեսպանութեան և Նախիջևանի կաթողիկ վանքերի մասին (pp. 53v—55v.):

դ. Պօղոս Գ. պապի կոնդակը, «Յաղագս արհեսպասց հայոց» (pp. 57r—58r.)

ե. Յակովբ Յիսուսիի ժամանակագրութիւնը, (pp. 316v—318v.)

Ձեռագրի հանդամանքները. կազմ՝ տախտակեայ հին կաշեկազմ, վիճակ՝ լաւ, նիւթ՝ թուղթ, մեծութիւն՝ 25×21, թերթ՝ 318, գիր՝ բոլորագիր: Յիշատակարան՝ «Արդ՝ աղաչեմ զձեզ սրբազն քհնյք, և զպիրք նորեկք, որք հանգիպիք դոյզն արածիս, յիշել մաղթեմ զմեղսամած զձօղ գրոյս զպողոսասար դպիրս, և զեղբայրն իմ հոգևոր, զյովհաննէսն, և այլ զաշակերտան իմ, զրիգորն, և զպօղոսն, և միբայէլն, որ բազում աշխատեցան, ընդիս, ձեռնտու լինելով յա՛մ իրաց, միով ողորմալիւ, և զուք յիշե՛լ լիջիք, ի ք՛սէ, —» (p. 58r.), գրութեան տնողը և ժամանակը՝ անյայտ: Եթէ սակայն ենթադրենք, որ ձեռագրիս «գձօղը» և p. 55v. յիշող «Յ՛ր բաղդասար... զեղջէն կէճկոյ, նոր ընձայ, որ այժմէ ի միասին գրիգոր վր՛դտին» նոյն անձնաւորութիւններն են, ապա կարող ենք եզրակացնել, որ ձեռագիրը գրուել է «ի վանս կէճկոյ» 1670-ական թուականներին:

Այն հանգամանքը, որ ձեռագրի վերջում կցուած է կէժկոյ վանքում կազմուած մի ժամանակագրութիւն, աւելի ևս հիմք է տալիս պնդելու այդ ենթադրութեան վրայ:

## Ա.

## Հ. Յակոբ Յիսուսի ժամանակագրութիւնը.

Հ. Յակոբ Յիսուսի մասին շատ քիչ բան գիտենք: Ձեռագրի մէջ նա իրեն անուանում է «ա՛ր յակոբ յ՛ի որդի եար ազիզի, ազգ՛ւ դարբնեցի, ի դեղէն կեժկոյ»: 1636 թուին Օգոստինոս Բաշեցին մեկնելով Լեհաստան նշանակում է նրան ժամանակաւոր «վերախնամօղ կ՛րգիս միաբանողաց և աջորդ ժողովրդէնն», (p. 318v.) 1650-ական թուականներին նա յիշում է Նախիջևանի գաւառահայերի շարքում\*): Հ. Օգոստինոս Բաշեցու մահուանից յետոյ Հ. Յակոբը ժողովրդի և եկեղեցականների կողմից ընտրւում է նրա տեղը: «Բայց մինչ սորա պատրաստութիւն տեսանելն, որ դիմեսցէ ի Հոռոմ առ ի հաստատել՝ տէր Պօղոս Փիրոմալբալայ Բրէզ օրհնեալ լինի Աղէքսանդր հայրապետէն արհիպիսկոպոս Նախիջևանայ»\*\*), Ձեռագրի մէջ յիշում է Հ. Յակոբի 1631—36 թուականներին կատարած ճանապարհորդութիւնը դէպի Հնդկաստան, ուր նա եւրոպական գաղթականների շրջանում Նախիջևանի հայ կաթողիկ համայնքների օգտին ժողովում է «բ՛զմ ապրանք, բ՛ճ թ՛մն, շուռջար, վաճի թէ փողէ», (p. 318r.): Հ. Անտոն Նազար Ապրակունացու հետ դարձեալ ժողովարարութեան նպատակով 1643-թուականին ուղևորւում է դէպի Ամերիկա և, հովանաւորուած սպանական կառավարութիւնից, միաբանութեան օգտին մի մեծ գումար է ժողովում\*\*\*), որ յետոյ նրա և Հ. Պօղոս Պիրոմալի մէջ մի

\*) Ալիշան. «Միսական» p. 388:

\*\*) Բ. Պատկանեան. «Նշխարք մատենագրութեան հայոց», Ս. Պետերբուրգ, 1884. p. 24:

\*\*\*) Հատ Ալիշանի, 25000 դուկատ, ibid, p. 396՝ ըստ Bedik-ի, «Cehil Sutun» 16000 իմպերիալ p. 378-9:

շարք վէջերի առիթ է տալիս \*):

Հ. Յակոբ Յիսուսի անուան հետ, որքան յայտնի է, գրական երկեր չեն կապուած: Նրա ստորև բերած ժամանակագրութիւնն էլ գրական ոչ մի արժանիք չունի: Այստեղ նա միայն ժամանակագրական կարգով ի մի է հաւաքում մի շարք կցկտուր տեղեկութիւններ, որոնք գլխաւորապէս ժե—ժէ դարերի պարսկա-տաճկական պատերազմների շուրջն են պատում: Վերջում գտնում ենք մի քանի տեղեկութիւններ կէճկոյ վանքի մասին:

Յամի տ<sup>ն</sup>, ա<sup>ն</sup>ի, ի սամիսոն ք<sup>ղ</sup>ք, որ է մերձ ծովին պոնդոսի, կրակ անկաւ, և զք<sup>ղ</sup>քն առ հասարակ այրե<sup>ց</sup> ծայրէ ի ծայր: Դ<sup>ր</sup>ձլ ի նոյն ամին ունկարաց կայսրն կոտրե<sup>ց</sup> զթուրքն որէ քրիշիւն և կոտորե<sup>ց</sup> ի զօրաց թուրքին հ<sup>ա</sup>, մ<sup>ղ</sup>:

ա<sup>ն</sup>գձ, կը թվին ապրիլ. ժ<sup>է</sup>, զատիկ գիշ<sup>ր</sup>ն ցուրա ար<sup>ք</sup>ր գայգիսն տարաւ զմ<sup>ան</sup> և զծ<sup>ան</sup>,

հթ, թվին կարկուտ երեկ մայիս ամսոյ ի, ի<sup>ր</sup>դ, զայգի և զցորե<sup>ն</sup>ն զամէնն բնաջինջ արար,

ճ<sup>ա</sup>, թվին գ<sup>ր</sup>ձլ ցուրտ ար<sup>ք</sup>ր, զայգիսն տար<sup>ւ</sup>ւ,

ա<sup>ն</sup>շխ<sup>ե</sup>, թվին թաթուռն երեկ, մորեխն երեկ, զուշն վ<sup>ր</sup> էր, մահն երեկ պատե<sup>ց</sup> ժանկ երեկ դախն փշացոյց:

Յամի տ<sup>ն</sup>, ա<sup>ն</sup>գձ, կ<sup>է</sup>, թվին ջանհանշայ իմիրզէն, գնաց ի հասան բէկին յ<sup>ա</sup>ն, և սպանաւ ի ձեռն հասան բէկին, հասան ալին մակուայ բերդումն բանգի էր գուս էրեկ և թգ<sup>ր</sup>ց մեր <sup>ա</sup>իս մշ<sup>ւ</sup>, ք<sup>ա</sup>, ամիս, յետ էնդոր հասան փատի շահն էրեկ, հասան ալին սպանէց, զմեր <sup>ա</sup>ս էառ և թգ<sup>ր</sup>ց, կ<sup>ը</sup> թվին:

հ<sup>ղ</sup>, թւին հասան բեկին գն<sup>ց</sup> զվրաստուն, թալանէց ու անթիւ անձինք կոտորէց և գերի ար<sup>ք</sup>ր:

հ<sup>է</sup>, թւին մեռ<sup>ւ</sup> իւր մահուամբ սօլտանն թգ<sup>ր</sup>էց:

\*) Ալիշան. ibid, ծանօթութիւն. Հ. Կղեմէս Գալանոս յիշում է Հ. Օգոստինոս Բաջեցու արեւելեան և արեւմտեան Հընդկաստանում կատարած ճանապարհորդութիւնների ու ժողովարարութիւնների մասին («Միաբանութիւն հայոց ս<sup>ք</sup>ր եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոսովմայ» Հոսովմ. 1690, I 525): Գալանոսի տուած այդ տեղեկութիւնները ուրիշ տեղ չենք գտնում: Արդեօք նա չէ շփոթում Հ. Օգոստինոս Բաջեցուն Հ. Յակոբ Յիսուսի հետ:

է՛ա, թվին, յաղուպ բէկն կռուեց՝ և զսօլտանն սպանէց, և ինքն թգ՛րց,

դ՛, թվին գնաց ի դար՝ պաղն մայրն և իւր եղբայրն մահադեղ արբուցին յաղուբ բէկին նա իմացաւ, մօրն և իւր եղբօրն յուսայի բէկին մահադեղէն խմեցոյց ի միասին մեռ՛ն, ի զարար՝ զն, սովի խալիւն էառ զյաղուպի բէի որպիւն զբայն սանդուբն և թգ՛րցոյց, և բզ՛մք ի թգ՛րկն ցեղիցն սպանէց, նուէմբ՛ր ամսոյ ի վերջքն. մեծամեծ պարլնէքն յամէն յաղաց՛ն, խալիլ բէկին, նա պարունքն գնաց ի յե... փոռակ շահ ալին վ՛ր սպանէց զնա, և զուղուլու մահմատի որդին,

դ՛ա, թվին անդի դր՛ձ և ի վանայ թ՛ն սուլէյման բէկին վ՛ր, սուլէյմանն սպանէց զն՛ա, օգոստոս ամսոյ ի մուտն էառ զբայն սաղուբն և դր՛ձ և ի թ՛օրեզ ըոքստա՛մ իմիրզէն բերդումս բանգի էր. զբ թվին, իբրահիմ իմիրզէն, բ՛զմ գօրօք էրեկ, մայ՛ս ամսոյ ի, ժ՛է, զըոստամ իմիրզէն հանեց և գնաց սուլէյման բէկին վ՛ր, սլէյմանն փախ՛ւ ի քուրդստան, և սպանաւ ի ձեռն զանայ խ՛լի որդոյն նուբալի բէկին. հուսէին ալի բէկն էառ զբայն սաղուբ իմիրզէն, գն՛ց ի շրվան, ձմեռն եկաց ի տեղն, գարունքն ելաւ ի շրվանա, և էրեկ ի բազարչայն, սախալի բէկն գնաց կռուեց՛ւ, յաղթէց ուղբայն, սաղուբն բռնէց, ո՛գ՛ձ, դ՛գ, թվ՛ տարաւ ի թարվէզ խեղդեցին.

ո՛գ՛ձ դէ, թվին ուղուրլու մահմատին որդին, սօլթան անմատն, սարմբօլ էր դուս էրեկ, ըոստամն գնաց դէմ, կուրլ չկարաց, եթող փախն՛ և ախլցխայ, անդից երեկ ի դաճարին հեծէլն ժգ՛վէց սօլթան անմատն էրեկ ի թարվէզ, ըոստամն էրեկ ի վ՛ր ջուղու զաշտումն կռուեցան, ըոստամն յաղթուեցաւ, սպանաւ բ՛զմ գօրօք, անմատն գնաց ի թարվէզ սկսաւ մեծ պարնէքն բռնիլ, իպայ սօլթանն փախաւ, զիմաց էր աղատունն, անմատն հետն գնաց, ի պէն յետ դր՛ձ անմատն ըսպ՛նէց ձմեռն, զուոստամի որդին զաւանդի միրզէն երեբ ի թարվէզ թ՛գր եղիր, գարունն որ ելաւ, ոգ՛ձ զբ թվին յաղուպ բէկին որդին մուբատ խանն շամախի էր հեծել ար՛ր էրեկ ալեանդին վ՛ր. նախչւանայ գետունն կռուեցան, ալեանդին զմուբատ խանն բռնեց իղիր բերդում, գալայանդուբ լաթիւ բէկն իւր որդոյն իղիր ի մեր բերումս. մին տարին անցաւ աւղուլ բաղրն էրեկ բերդիս հէսար, բերդի մ՛ր զն զլաթիւ բէկն հանէց զնդանէ վէրեկին, զաղուլ բաղրն բռնեցին գրին բերդումն, լաթիւ բէկն գն՛ց զիպայ սօլթանն սպանէց, էրաղատանն, զալեանդին էառ ու իրեր ի թախթն.

ո՛գ՛ձ զթ, ջահանշաի միրզին տղէն գանջայ իրեաց, հեծել ժ՛գվէց, ո՛շ թվին նա ի դանջոյ իրեկ, ալեանդին թարվիղոյ, զօշ զաշտումն ճակատ՛ցան ջահանշին տղէն եթող փախն՛ և

ն՛չ թվին սովին շամախի ի առ, զշրվանշէն սպանէց, աշունքն  
 երեկ շարուր զալւանդն փախուց զհեծեկն կոտոր՛ց, ձմեռն գնաց  
 ի թարվէզ, գարունքն գնաց ալւանդին վ՛ր, ալւանդին խոյս իրեդ  
 իրեկ թարվէզ, շահն էլ յետ դ՛րձ՛ւ ի թարվէզ, ալւանդին էլ յետ  
 փախ՛ւ ի դիարբէկ մէռաւ:

Թվին ո՛ւե՛ճ, հ՛ե, շահ թահմազն զհուր ելաւ, շահ իամային  
 դահ դահ բերգումն բանդի էր, դուս էրեկ ելաւ ի թաղթն, մէկ  
 տարի թգր՛ուի ար՛ր, զհուր խուդարանտայ փաթշահն ելաւ ի  
 թ՛ղթն, գ, տարի սով ընկաւ, գ՛, տարէն յետն մահ երեկ, մահէն  
 յետն էլ սով եկաւ, ապրիլ, ը՛, կարմիր կ՛րկին ցուրտ ար՛ր, այ-  
 գին ծառն տունկն զամէն տարաւ: ~~—~~

Թվին, ո՛ւե՛ճ, ձ՛ե, ամիր համզէն թախտ ելաւ, գ՛, տարի  
 փաթշահութիւն արէց:

Թվին ո՛ւո, ի՛է, մաթէոս եպ՛սն միլանշեցի վաղջանեցաւ,  
 յուլիս, ժ՛գ:

Թվին ո՛ւո ի՛թ, և օգոստոս ամսի ը՛տ՛ր օգոստինոս ազգէն  
 բաջեցի պուտաղի որդի ընտրե՛լ արքեպ՛ս նախնուանա երկրին,  
 գնաց մեծն ի հ՛ում օրհն՛ցւ ուրբանոս հայրապետէ, ը՛, եր՛դ,  
 դ՛րձւ ի վիճակս նախնանայ:

Թվին ո՛ւոլ՛ա, ապրիլ ամսի, ա՛, մտաւ յե՛ս, ապրիլ ամսի  
 թ՛, ցուրտ ար՛ւ, ծ՛ոուամնի ցուրտ տար՛ւ, ոչինչ եմիշ չմնաց:

Թվին ո՛ւոլ՛ա, ևս տ՛ր յակոր յ՛ի, որդի եար աղիզի, ազգ՛ւ  
 դարբնեցի, ի գեղէն կէճկն, ա՛նքցայ ի հնդկաց ՝ն, վ՛ս ողոր-  
 մուե՛ շրջեցա՛ ի ք՛ղքն գլխաւոր, գուս մանիրն, չին քօշի, դ՛րձայ  
 ա՛յ ողորմու՛րն ի դէ՛սս երնջակ, բ՛զմ ապրանք, ը՛ճ թ՛մն,  
 շուռջառ, վաճի թէ փողէ բերի, էր թիմն, ո՛ոլ՛գ, գեկտ՛մբ՛, ի՛ե  
 մտա տ՛ւն:

Այս ամի խոնդքարն էրեկ երևան, էառ, մուռթուղայ փաշէն  
 եթող բերդումն ինքն գնաց թարվէզ, անդի դ՛րձ՛ւ իւր ՝ն:

Այս ամի լէհաց թգ՛րն դէսպան առ՛քց մօտ շահ սաֆին.  
 շահ սաֆին պարոն տ՛ր օգոստինոս արքե՛պս առք՛ց լեհաց ՝ն  
 մօտ թգ՛րն, ըստանիսլաւ, զիս, յակորս յ՛ի ընթրե՛ց, վերայխնա-  
 մօղ կ՛րգիս միարանողաց ու աջորդ ժ՛ղվրդինն:

Այս ամի մուրթուղայ փաշէն գերացուց գ՛ւսս, գ՛ճ՛ի գերի  
 ապարաներո գնաց և ...լ՛ամ սպանածն տարածն, օլքէս դուս ելաւ,  
 ո՛ւե՛ճ ջան:

դ՛րձւ այս ամի շահ սաֆին էրեկ գնաց բերդին վ՛ր, գ, ամիս  
 նստաւ, մարտի ժ՛ե օրն երիշ ելաւ բերդին վ՛ր, սիր հաճին առին  
 մարտի, ի՛ր, բերգն ապին, մուրթուղա փաշէն մեռ՛ւ, շխիջան փա-  
 շէն, իբրահիմ փաշէն, մէիմուն վի՛շ և այլ բ՛զմ փաշունէք, և զէիմնի  
 բունէց, ողորկէց դահ՛ դահ՛ զալէն, մուրատ բէկն, թահմազ դուլի

խանն, որ բերդն աւելին, գօնմիշ հլան հետ խոնթքարին զնացին,  
շահն երբ յետ դրձւ, օլքէս գնաց զանկատ մախսուտ սուլթանէն,  
մինչև արտաւել այն տեղն սուլթանուին կտրեցին, սուլթանուին  
սուլին իւր տղին իմամ զուլի բէկին,

ս՛ր Պօղոս,

(կարմիր թանաքով).

Թվին ո՛ր է, մարտ ամսոյ առ՛ջի օրն, սկիզբն արինք վա-  
նաց սրբատան, յետքի զարն կտր՛ցինք ընձան շինեցինք բ՛զմ  
աշխատ՛ցանք ի վ՛ր հէտարին և ընձանինու Նախ ես տ՛ր յկ՛բս յ՛ի  
վ՛րինամոդ կ՛ըզիս, ես տ՛ր մաթէնոս, ես տ՛ր ջվանս շահբունեցի,  
եւ տ՛ր մաթոսս աւագ սարկու՛ղ, եւ տ՛ր մաթէնոս կիսասարկու՛աւագ,  
եւ տ՛ր գրիգորս, եւ տ՛ր թումէս, եւ Ֆ. կօնֆէրս խ՛շատուրս, և  
վանքի միաբանս. բ՛զմ աշխատ՛ցաք ձեռօք մօրօք, ով ոք տեսու  
կ՛մ կը՛ղայ մի հայր մեղայիւ զմեզ յիշէ. և ինքն յիշե՛լ լիցի  
ի ք՛սէ, սաֆարն որ բազ(?)վան էր մոյն, նա եղ խ՛սատն,  
տ՛ր յակոր էր. և ամիրն:

Ա. Յովհաննիսեան.

(Շարունակիկ)



## ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԳԻ

### Հայերէն ձեռագրեր

(Համառօտ նկարագրութիւն և յիշատակարաններ)

Շարունակութիւն \*)

31.

### Ճ Ա Շ Ո Յ

(Թ. 11բ. մեծադիր, բոյորագ. բւկ. գրչ. ԶԶԹ = 1340.)

(Սկզբի երկու թերթը, որոնց վրայ գտնուում են հետևեալ  
երկու յիշատակարանները, պատկանում են մի ուրիշ Ճաշոցի և  
կցուած են սրան):

1ա. Տ՛նընդառաջի ճաշոյ կարգայ, և զեղկելիս յիշեայ:

2ա. Փառք անբաժանելի և միասնական ս՛ր երբորգութե՛ն  
հօբ և որդոյ և հոգոյն սրբոյ: յ՛ամ սրբոց և յ՛ամ արարածոց, յի-  
մանալեաց և ի սգալեաց. ի հրեշտակաց և ի մարդկանէ ամէն: Բանդի որք մեծութեան ընչից ըզձանան, ոչինչ աշխատութի՛ն

\*) Տես. Արարատ, 1914, նոյեմբ.